Արձանագրության 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/95» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան17.03.2020թ.

Ժամը՝ 17:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ալոյան /գնահատող/, Ա. Սիմոնյան /գնահատող/, Ջ. Հովհաննիսյան /բացող/, Մ. Մանուկյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Ա. Բաղդիշյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Բանակցությունների անցկացման որոշման մասին

(Ա. Բաղդիշյան)

2.1Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: **Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը** կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա» որոշեց նիստը կասեցնել է, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Քանի որ առաջին չափաբաժնի մասով **Վեգա Ուորլդ ՍՊԸ-ի, իսկ 2-րդ չափաբաժինների** մասով **Վեգա Ուորլդ ՍՊԸ-ի**և **ԱՐԱՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ ՍԵՐԳՈՒՇԻ Ա/Ձ-ի**կողմից ներկայացրած գնային առաջարկները **գերազանցում են մեր նախահաշվով սահմանված գները,** ուստի գնահատող հանձնաժողովը որոշեցգնման ընթացակարգը կասեցնել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստ, և ծանուցել մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին:
Կոռոնավիրուսի կանխարգելման նպատակով, մասնակիցներին առաջարկվել էր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններն իրականացնելառցանց տարբերակով՝ տեսակապով՝ իրենց համաձայնության պարագայում:

ԱՐԱՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ ՍԵՐԳՈՒՇԻ Ա/Ձ-իկողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեից ներկայացվել է գրություն առ այն, որ նա հրաժարվում է մասնակցել գների նվազեցման շուրջ իրականացվող միաժամակյա բանակցություններին:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց գների նվազեցման շուրջ բանակցություններն իրականացնել էլեկտրոնային փոստի միջոցով՝ **Վեգա Ուորլդ ՍՊԸ-ին** առաջարկելով ներկայացնել իրենց կողմից վերջնական նվազեցված գները, մինչև սույն թվականի **մարտի 19-ը, ժամը 15:00-ն**:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **մարտի 19-ը, ժամը 15:00-ն**:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	_____	Ա. Բաղդիշյան
Անդամներ՝	_____	Ա. Ալոյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ջ. Հովհաննիսյան
	_____	Մ. Մանուկյան
Համակարգող՝	_____	Ս. Եղիազարյան